սկսեց բժշկական գործողութիւնը։ Եւ յընթացս մի ամսուայ բոլորովին առողջացրեց։

Նազանի բաջու տան դուռը մի ուխտատեղւոյ դրան նման լցուած են բազմութիւն հիւանդաց և հիւանդատեսրոյ։ Հայ, Թուրք, մալական անխտիր վայելում են Նազանի բաջու մայրական և քրիստոնէական գուրմն ու խնամքը։ Նազանի բաջին այնքան հռչակ և համբաւ ունէր ոսկրաբուժութեան մէջ, որ շատ անգամ հրաւիրում էին Բագու, Ղուբայ, Դարբանդ և ուրիշ քաղաքներ։



ՈՍԿՐԱԲՈՑԻ ՆԱԶԱՆԻ ԲԱՋԻՆ

Նազանի բաջին առողջացրել էր նախ իմ նախորդներիս՝ Անդրէաս եպիսկոպոսի Թեւը, և Թադէոս եպիսկոպոսի ոտը,